



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/27-2/19936-2019 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ **Կոմիդաս Հունանյանին** 2019 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթացի թեստավորմանը մասնակցելու համար:

2. **Կոմիդաս Հունանյանի** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ներքին աուդիտի բաժնի ավագ աուդիտոր **Ասահիյր Սրեփանյանի** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (*հաշվապահական հաշվառման բաժնին*) գործուղման հետ կապված ծախսերը (*օրապահիկ և ճանապարհածախս*) կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ **Կոմիդաս Հունանյանին**՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

2019 թվականի դեկտեմբերի 09  
ք. Հրազդան  
N 249-Ա



**Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**